Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Արագածոտնի մարզի ֆիզիկաաշխարհագրական ուսումնասիրումը որպես հայրենաճանաչության միջոց
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Լիանա Ստեփանյան Հարությունի Մանկավարժ Աշխարհագրություն 10,11,12
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Երևանի Ա.Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց +374-10-583270 Yerevanschool29@mail.ru School-29.weebli.com

Բովանդակություն

Տիտղոսաթերթ ----------1
Բովանդակություն ----------2
Ներածություն ----------4
Պարագրաֆներ/մասեր----------5
Եզրակացություն,առաջարկություններ----------12

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	• Աշակերտների մոտ մեծացնել հայրենաճանաչությունը ու հայրենասիրությունը: • Արդյո՞ք թեմայի ուսումնասիրությունը աշակերտների մոտ կձևավորի քարտեզից օգտվելու,տարածքում կողմնորոշվելու,օբյեկտները քարտեզագրելու,եզրակացություններ անելու հմտություններ:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը ն խմբի համար	Աշակերտները դաշտային պայմաններում ավելի հստակ կպատկերացնեն նախապես մշակված նյութը , դրա կիրառական նշանակությունը , հստակ կհասկանան նյութի ճշտության չափը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• Սովորել սովորելու • Ինքնաճանաչողական և սոցիալական • Մշակութային
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	«Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը. դա ձեռք է բերվում ամեն մի սերնդի և նրա առանձին անդամի կողմից, ձեռք է բերվում Հայրենաճանաչումով, Հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով»: [1 էջ 4] Հայրենիքը սիրում ենք՝ ճանաչելով: Այն սկսվում է տանից, քաղաքից կամ գյուղից, լեռներից և դաշտերից, քո տնկած և ջրած ծառից ու ծաղկից, Արարատ և Արագած զագաթներից, Սևանի կապույտ լազուրից, Գառնիից ու Գեղարդից, Տաթևից ու Գանձասարից, Արուճից, Մուղնիից, Զվարթնոցից ու Էջմիածնից: Այս երկրում չբացահայտվող շատ գաղտնիքներ կան: Ինչքան ճանաչում, այնքան սկսում ես սիրել հողը, ջուրը, օդը, անգամ քարն ու ավազն են դառնում թանկ և անփոխարինելի ու սկսում ես հասկանալ ու գնահատել կորուստն ու վերածնվելու անհրաժեշտությունը: Այսօր այդ ձգտումը մեզ կտանի դեպի Արագածոտնի մարզ՝ հետաքրքիր, հարուստ նյութական և ոչ նյութական մշակութային արժեքներով: Համաձայն ՀՀ «Վարչատարածքային բաժանման մասին օրենքի» Արագածոտնը ՀՀ-ի 10 մարզերից մեկն է: Տարածքը՝ 2702 կմ Բնակչությունը՝ 141 հազար մարդ Կենտրոնը՝ ք. Աշտարակ Տարածքով միջին մեծություն ունի, բնակչության թվով գերազանցում է միայն Վայոց ձորի և Տավուշի մարզերին: Անվանումը ժառանգել է պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառից Մարզի անվանումը կապվում է նաև Արագած լեռան հետ: Գտնվում է Երևանի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթ Արագածի միջև: Արևմուտքում տարածքը ձգվում է մինչև Թուրքիայի հետ պետական սահման: Ավտոճանապարհային կարևոր հանգույց է: Այստեղով են անցնում՝ 1. Երևան– Աշտարակ– Թալին– Գյումրի,

2. Երևան- Աշտարակ- Ապարան- Սպիտակ,
3. Երևան- Արմավիր-Բաբակերտ- Գյումրի
ավտոճանապարհները:

Արևմտյան հատվածով անցնում է երկաթուղին:

Ծովի մակերևույթից ունի 950 մ- 4095 (96) մ բարձրություն:

Այստեղ հանդիպում են բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները: Այստեղ են գտնվում Թալինի, Կարմրաբեռնի, Շամիրամի, Ապարանի սարավանդները: Շատ են սառնորակ աղբյուրները: Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ և Ամբերդ վտակներով:

Հայտնի է Մաստարայի սելավային գետակը, որը հաճախ մեծ վնաս է հասցնում ցանքատարածություններին:

Քասաղ գետի վրա է գտնվում Ապարանի ջրամբարը:

Քասաղ գետի ակունքը կազմվում է երեք գետակներից , որոնք սկիզբ են առնում Փամբակի լեռներից ու Արագածի լանջերից:

Քասաղը վերին հոսանքում հարթավայրային է, դանդաղահոս , միջին հոսանքում դառնում է լեռնային՝ ջրառատ ու արագահոս: Վերին հարթավայրային շրջանում գետի հունը ուռ ամիս ցամաքում է, մշտական հոսք ունի Ապարան քաղաքից սկսած/5/ :

Միջին հոսանքում շատ մեծ է էրոզիոն գործունեությունը, որը առավել լավ կարող ենք տեսնել Սաղմոսավանքի հարակից տարածքում (Տղամարդիկ ֆիլմը),

որտեղ գետի հովիտը մինչև 200մ բարձրության հասնող խոր ձոր է:

Քասաղ գետի ու նրա վտակների վրա կան շատ գեղատեսիլ ջրվեժներ, օրինակ,

1. Գեղարատի ջրվեժը, որը գտնվում է հենց Գեղարոտ վտակի վրա: Ձմռանը սառչում է, ամռանը 17մ բարձրությունից գահավիժում ցած:

2. Քասաղի ջրվեժ՝ Հայաստանի ամենաբարձր ժրվեժն է, 70մ բարձրությամբ, Հովհաննավանք վանական համալիրի դիմաց:

Արագածի ամբողջ մակերեսով տարածված են բազմաթիվ լճեր, որոնք ունեն սառցադաշտային ծագում :

Սառցադաշտային ծագման լճերին բնորոշ է ոչ մեծ խորությունը: Արագածի լանջին են գտնվում հետևյալ լճերը

Կուրաղբյուր

Եղնալիճ

Լեսինգ

Հորթախեղդ

Ումբոյի

Քարի :

Քարի լիճը գտնվում է 3207մ բացարձակ բարձրության վրա: Լճի հարավային ափին է գտնվում Երևանի ֆիզիկայի ինստիտուտի Առաջնային տիեզերական ճառագայթների գրանցման և հետազոտման կայանը: Ստեղծվել է 1943 թվականին. գտնվում է Արագած լեռան վրա, ծովի մակարդակից 3200 մ բարձրության վրա: Հիմնադրվել է ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրների ջանքերով: Իր տեսակի մեջ կայանն առաջինն էր Խորհրդային Միությունում, որ ուներ հաստատուն մագնիսով աշխատող աշխարհի ամենամեծ մագնիսական սպեկտրոմետրը/5/: Անհիշարագրելի գեղեցկություն ունեն սառցադաշտերի գործունեության հետևանքներ՝ մորենային թմբերը, որոնք մերձգագաթային հատվածում հանդես են գալիս քարացրոնների տեսքով ,իսկ միջին բարձրություններում նմանվում են գլաքարերի: Անկրկնելի են նաև առցադաշտային տոհգեր, որոնք իրենց մեջ թաքցնում են գեղեցիկ չքնաղ <<բազալտե արևներ>>: Վերջիններս 2008 թ ՀՀ կառավարության N967 որոշմամբ ընդգրկվել են երկրաբանական հուշարձանների ցանկում:

Մարզի կլիման բազմազան է: Մեծ են ցածրադիր և բարձրադիր գոտիների կլիմայական տարբերությունները: Շատ են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ:

Օգտակար հանածոներից հիմնականում հրաբխային ապարատեսակներն են՝ բազմագույն տուֆ, բազալտ, պեռլիտ, հրաբխային խարամ, որոնք առաջացել

	են Արագածի հրաբխային ժայթքումների հետևանքով և որակյալ շինանյութ են: Ունի խմելու ջրի հարուստ պաշարներ: Երևան քաղաքի ջուրը ևս, հիմնականում ,գալիս է այս մարզից: Այն ամենավաղ բնակեցված շրջաններից է: Դրա վկայությունն են տարբեր վայրերում հայտնաբերված քարի ու բրոնզի դարերի հուշարձանները: Բնաչությունը կենտրոնացված է հիմնականում Քասաղ գետի և նրա վտակների միջին ավազաններում, որն էլ հիմք է հանդիսացել գծային տարաբնակեցման : Ներկայիս բնակչությունը ձևավորվել է հիմնականում վերջին տասնամյակներում, երբ նոր յորացվող հողերի վրա հիմնվել են նոր բնակավայրեր: Հիմնականում բնակչությունը կենտրոնացված է 900-1500 մ բարձրության վրա: Բնակավայրերի ընդհանուր թիվը 120 է, որոնցից ընդամենը 3-ը ունեն քաղաքի կարգավիճակ՝ Աշտարակ, Ապարան, Թալին: Ելնելով մեր երկրի քաղաքական լարված իրավիճակից ստիպված եղանք նախատեսված էքսկուրսիաները չեղարկել: Սակայն օգտվելով համացանցի ընձեռած հնարավորություններից՝ աշակերտները կարողացան փնտրել, գտնել, դասակարգել անհրաժեշտ տեղեկատվությունը և մեզ ներկայացնել իրենց կողմից մշակված Արագածոտնի մարզի հնարավոր տուրիզմի զարգացման հնարավոր տարբերակները:
Օգտագործված մեթոդները, գործիքները	Հետազոտական մեթոդ
Իրականացման ժամանակահատվածը	Սեպտ Եմբեր

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Աշակերտներ/20-25/

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Աշակերտների առաջարկով կազմվեց մարզի տուրիստական զարգացման հեռանկարները: Մեր հետազոտությունների արդյունքում հասկացանք, որ Արագածոտնի մարզն ունի բավականին մեծ պոտենցիալ տուրիզմի զարգացման համար: Առաջին նախապայմանը իհարկե ենթակառուցվածքների զարգացումն է, որը կապված է ոչ միայն մասնավոր ընկերությունների ներդրումների , այլ նաև պետական `տուրիզմի զարգացմանն ուղղված քաղաքականության հետ: Արագածոտնի մարզում հնարավոր է զարգացնել տուրիզմի հետևյալ ուղղությունները, ոչ միայն առանձին այլ նաև համակցված: . Ուխտագնացություն Քանի որ Արագածոտնի մարզը շատ հարուստ է վանական համալիրներով և եկեղեցիներով, այդ իսկ պատճառով այն ունի մեծ պոտենցիալ ոչ միայն համահայկական այլ նաև համաքրիստոնեական ուխտագնացության կազմակերպման համար: Օրինակ, Հովհաննավանքը, քանի որ այստեղ են գտնվում Հովհաննես Մկրտչի մասունքները: Մեկ օրվա մեջ հնարավոր է այցելել մինչև 9 եկեղեցի: Ալկոտուրիզմ

Արագածոտնի մարզը ունի լայն հնարավորություններ ալկոտուրիզմի զարգացման համար: Քանի որ այստեղ կան բազմաթիվ գինեգործարաններ, որտեղ արտադրվում են ոչ միայն գինիներ, այլ նաև մրգային օղիներ, կոնյակ: Գինեգործարաններից են Արմասը, Արմենիա Վայնը, Ոսկեվազը:

Գիտական տուրիզմ

Հեռանկարները մեծ են գիտական տուրիզմի զարգացման համար, քանի որ այստեղ է գտնվում Բյուրականի աստղադիտարանը, որտեղ պարբերաբար կազմակերպվում են գիտական կոնֆերանսներ՝ նվիրված աստղագիտությանը և աստղաֆիզիկային: Հաշվի առնելով այն հանգամանքը,որ դեռ Խորհրդային շրջանից սկսած Բյուրականի աստղադիտարանը ունեցել է և ունի գիտական մեծ նշանակություն, զարգացած ենթակառուցվածքներ, ապա այսօր ևս Բյուրական համայնքը շարունակում է զարգանալ և զարգացնել իր ենթակառուցվածքները, ինչը չենք կարող ասել հարևան Օրգով, Անտառուտ, Ագարակ համայնքների մասին: Եթե վերականգնվի և ճիշտ գնահատվի Պարիս Հերունու ռադիոպտիկական աստղադիտակը, ապա հնարավորությունները կմեծանան: Ալիխանյան եղբայրների կողմից ստեղծված Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը՝ Քարի լճի մոտ, և ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտը, Բյուրական գյուղում ևս մեծ հնարավորություններ կարող են ստեղծել:

Գաստրոտուրիզմ

Բյուրական (գաստրո բակ)

Zip Line

Մնացականյան գաստրո բակ

Զրի տուն,

Բյուրական հյուրատուն,

Բյուրական պանդոկ

Բյուրական օջախ ռեստորան,

Ամբերդ հոթել, Հին Աշտարակ պանդոկ, Օշականի Բունիկ հյուրատունը,

Սելինա հյուրատուն

B&B հյուրատուն . այս բոլոր հյուրատները և գաստրոբակերը շատ լավ հնարավորություններ են ստեղծում գաստրոտուրիզմի զարգացման համար՝ առաջարկելով տիպիկ հայկական գյուղական միջավայրում հայկական խոհանոցի համտեսում:

Մշակութային տուրիզմ, էթնիկ փոքրամասնություններ

Art Gallery

Երաժշտական ակադեմիա, Ռյա Թազա գյուղի զիկուրատը (եզդիական համանիի սրբավայր), Խրիմյան Հայրիկ կրթահամալիրը լավ նախադրյալ են մշակութային տուրիզմի զարգազման համար:

Էքստրեմալ տուրիզմ

Այս մարզում կան մեծ հնարավորություններ լեռնադահուկային սպորտի, հոպանուղու (Ծաղկահովիտ համայնք), սապբորդինգի, պարագլայդինգի, լեռնագնացության, նավավարության (Ապարանի ջրամբարում, Քարի լճում), ջիպտուրիզմի, ժայռամագլցման զարգացման համար:

Ագրոտուրիզմ

Մարզը տալիս է հնարավորություն ծանոթանալ փոքր գյուղերի կենցաղավարությանը և լինել դրա մասնակիցը, վառ օրինակ է Աշնակ գյուղը, իսկ զարգացման մեծ պոտենցիալ ունի Գառնահովիտ գյուղը:

Համակցված տուրիզմի օրինակ է Աշնակ գյուղում գտնվող Նուշ հյուրատունը, որը հաջողությամբ մատուցում է գաստրո- և ագրոտուրիզմի ծառայություններ:

Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Դանիելյան Լ., Ճանաչիր Հայրենիիդ, Երևան, 2008:
2. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984:
3. Հովսեփյան Ա., Մանասյան Մ., Հայաստանի աշխարհագրություն դպրոցական դասագիրք, Երևան, 2020
4. Գաբրիելյան Հ. Կ. Հայկական լեռնաշխարհ, Երևան 2000
5. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A1%D5%AE%D5%AB_%D5%BF%D5%AB%D5%A5%D5%A6%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B3%D5%A1%D5%BC%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B5%D5%A9%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6